Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Անահիտ Ավանեսյան, ՀՀ առողջապահության նախարար

2. Գործուղման վայրը և ժամկետները

Ինդոնեզիայի Հանրապետություն, Բալի

2024 թվականի դեկտեմբերի 2-6-ը

3. Հրավիրող կողմը

ԳԱՎԻ պատվաստումների և պատվաստանյութերի միջազգային դաշինք,

Ինդոնեզիայի առողջապահության նախարարություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Այցիս նպատակն էր մասնակցել ԳԱՎԻ-ի պատվաստումների և պատվաստանյութերի միջազգային դաշինքի խորհրդի տարեվերջյան գագաթնաժողովին՝ որպես նշյալ խորհրդի անդամ:

Հայաստանը հաջողված և օրինակելի համագործակցության երկրների շարքում է: Տրամադրվող օգնության փաթեթների շրջանակում երկիրը հաջողությամբ կատարել է իր հանձնառությունը, ապահովում է բարձր ծածկույթ և որակյալ իմունականխարգելման ծառայություն, այնուամենայնիվ Հայաստանի աշխատանքը ԳԱՎԻ-ի դաշինքի հետ շարունակվում է՝ զարգացնելով համագործակցության նոր մակարդակներ:

Գագաթնաժողովի հիմնական նպատակն էր ԳԱՎԻ-ի նոր ռազմավարական շրջանի 2026-2030 թթ. գլոբալ ծրագրերի հաստատումը և համապատասխան ռեսուրսների մոբիլիզացիայի ուղիների քննարկումը:

5. Քննարկված թեմաները

ԳԱՎԻ-ի գագաթնաժողովի 2024 թվականի հանդիպման շրջանակներում հիմնականում քննարկվել են դաշինքի 2026-2030 թթ. ռազմավարության ուղղությունները՝ միտված ոլորտի գլոբալ նպատակների իրականացմանը, իմունիզացիայի ծրագրերի և առողջապահական համակարգերի ամրապնդմանը, գլոբալ մակարդակով պատվաստանյութերի հասանելիության ապահովմանն ուղղված առաջնային մարտահրավերների հասցեագրմանն ու վերջիններով պայմանավորված խնդիրների լուծմանը:

Գագաթնաժողովի շրջանակում միջին և միջինից բարձր եկամուտ ունեցող երկրների համար ծավալվել են հատուկ քննարկումներ նոր համագործակցության մոդել մշակելու նպատակով: Այս աշխատանքները շարունակական են լինելու և ընդգրկելու են հիշյալ երկրների ներկայացուցիչներին աշխարհի բոլոր տարածաշրջաններից:

Քննարկումների ընթացքում գլոբալ զարգացումների և ֆինանսական կանխատեսումների համատեքստում մոտալուտ ժամանակահատվածի համար հատուկ կարևորվեց ռեսուրսների համախմբման հարցը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Գագաթնաժողովը կարևոր էր հատկապես միջին եկամուտ ունեցող երկրների, այդ թվում նաև՝ Հայաստանի համար՝ ԳԱՎԻ-ի օժանդակությունից օգտվելու, ինչպես նաև նոր պատվաստանյութերի ձեռքբերման հնարավորությունների տեսանկյունից:

Համագործակցության նոր մակարդակներ ձևավորելու նպատակով այցի շրջանակներում ունեցել եմ երկկողմ ձևաչափով մի շարք հանդիպումներ անդամ և դոնոր երկրների առողջապահության նախարարների հետ, որոնց ընթացքում քննարկվել են իմունականխարգելման ծրագրերը և միջին եկամուտ ունեցող երկրների կարևորությունը ԳԱՎԻ-ի ծրագրերում:

Գագաթնաժողովի շրջանակում հանդիպել եմ Ինդոնեզիայի առողջապահության նախարարի հետ, քննարկել երկու երկրների առողջապահական համակարգերի փոխգործակցությանը վերաբերող հիմնահարցերը և

համագործակցության հեռանկարները: Պայմավորված առաջիկա աշխատանքներով՝ կարևոր համաձայնության ենք եկել համատեղ մոտեցումներ մշակելու հարցում՝ ամրապնդելով միջին եկամուտ ունեցող երկրների դիրքը ԳԱՎԻ-ի բոլոր հարթակներում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

ԳԱՎԻ-ի խորհրդի նիստն ավարտվեց մի շարք կարևոր որոշումներով, այդ թվում՝ դաշինքի 2026-2030 թթ. ռազմավարության հաստատմաբ, որն, ինչպես նշեցի, կոչված է օգնելու երկրներին կատարելագործելու իմունիզացիայի ծրագրերը և փակելու պատվաստանյութերի բացերը առավել խոցելի երկրներում:

8. Առաջարկությունները

Պայմավորված առաջիկա աշխատանքներով՝ կարևոր համաձայնության ենք եկել համատեղ մոտեցումներ մշակելու հարցում՝ ամրապնդելով միջին եկամուտ ունեցող երկրների դիրքը ԳԱՎԻ-ի բոլոր հարթակներում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

11.12.2024

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

11 դեկտեմբերի, 2024 թ.

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1250-Ն
որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը — ՀՀ առողջապահության նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը — N 1091-Ա 28.11.2024թ.
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) (*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*) — Նախարար Անահիտ Ավանեսյան
4. Գործուղման վայրը — Ինդոնեզիայի Հանրապետություն ք.Բալի
5. Գործուղման ժամկետները — 2024թ.դեկտեմբերի 2-6-ը
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը (*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*) — Գիշերավարձ, օրապահիկ,ճանապարհածախս
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը (*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման կարգերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Անահիտ Ավանեսյան*	*Անուն, ազգանուն 2*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	0.0		0
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	0.0		0.0
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	0.0		0.0
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	0.0		
	Օրերի քանակը	3		
	Ընդամենը (դրամ)	0.0		0.0
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)			0
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	0.0		0.0
	Օրերի քանակը	4		
	Ընդամենը (դրամ)	0.0		0.0
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Մուտքի արտոնագրի վճար			
	Այլ ծախսեր (նկարագրել)			
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		0.0		0.0

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը

(ստորագրություն) 02.12.2024